Հաստատում եմ՝

Տնօրեն ………………………Լ. Քննաքսզյան

«__31__» __08__ 2023թ

Արա Հարությունյանի անվան

Հ. 49 հիմնական դպրոցի

IV դասարան

# Դաստիարակի աշխատանքների տարեկան ծրագիր

## 2023-2024 ուսումնական տարի

Դաստիարակ՝ Գ. Աղաբեկյան

## Դաստիարակչական աշխատանքների հիմնական ուղղությունները

| N | Գործունեության ոլորտը | Բովանդակություն |
| --- | --- | --- |
| 1 | Կազմակերպչական աշխատանքներ | Դասարանը բաղկացած է 18 աշակերտից՝ 11 աղջիկ, տղա՝ 7: Դասարանում կան գերակտիվ, ծնողազուրկ, թույլ կարողություններով օժտված աշակերտներ: Դասարանը համերաշխ է, կա փոխադարձ սեր ու հարգանք միմյանց հանդեպ: Հիմնականում բարեխիղճ, պատասխանատվության զգացումով, ուսման դերն ու նշանակությունը հասկացող աշակերտներ են սովորում 4-րդ դասարանում: |
| 2 | Աշխատանքային դաստիարակություն խնդիրները | <<Աշխատանքը մայրն է ամեն բարի-քի>> կարգախոսով պետք է աշակերտի մեջ սերմանել սեր աշխա-տանքի նկատմամբ: Դասասենյակի, բակի, տան, փողոցի մաքրությունը միշտ պետք է լինի նրա ուշադրության կենտրոնում: Նա պետք է մասնակցի շաբաթօրյակներին: |
| 3 | Հոգևոր դաստիարակություն խնդիրները | Հայ աշակերտի կարևոր խնդիրներից մեկը ազգային ոգով դաստիարակվելն է: Նա ոչ միայն պետք է կրթությունը իրագործի մայրենի լեզվով, այլև ծանո-թանա ազգային մշակույթին ու պատմությանը, ավանդույթներին ու սովորույթներին: Այցելի եկեղեցի, մաս-նակցի եկեղեցական տոներին ու ծիսա-կատարություններին: |
| 4 | Գեղագիտական դաստիարակություն խնդիրները | Յուրաքանչյուր աշակերտի լիարժեք ձևավորման համար անհրաժեշտ է, որ զարգանա նրա գեղագիտական դաս-տիարակությունը: Պետք է սերմանել սեր գեղեցիկի, բարու հանդեպ և իրա-զեկել ազգային ու համաշխարհային |

| | | |
|---|---|---|
| | | մշակույթի արվեստի գանձերին: |
| 5 | Ռազմահայրենասիրական դաստիարակություն խնդիրները | << Հայրենիքները պահպանել հայրենասիրությամբ, որպեսզի նրանք հարատևեն>> Նժդեհյան այս գաղափարախոսությամբ դաստիարակել մի այնպիսի սերունդ, որը միշտ պատրաստ կլինի պաշտպանել հայրենիքը՝ թշնամիներից: |
| 6 | Ֆիզիկական դաստիարակություն Խնդիրները | << Առողջ հոգի՝ առողջ մարմնում>> կարգախոսով առաջնորդվել ու հասնել նրան, որ աշակերտները ոգևորությամբ ընդգրկվեն տարբեր սպորտային խմբակներում ու հաճախակի մասնակցեն սպորտային միջոցառումներին: Ձևավորել լուրջ վերաբերմունք ֆիզիկական դաստիարակության նկատմամբ: |
| 7 | Բնապահպանական դաստիարակություն խնդիրները | Մարդ արարածը համարվում է բնության մի մասնիկը: Այդ պատճառով էլ նա պետք է շատ սիրի բնությունը և հոգ տանի նրա մասին: Միշտ պատրաստ լինի ծառատունկ կատարելու, ծաղիկ ու թուփ աճեցնելու և այդ ամենը պահպանելու համար: |
| 8 | Աշխատանք ծնողների հետ: Դպրոց-ընտանիք կապը խնդիրները | Աշակերտի ճիշտ դաստիարակության համար կարևոր է դպրոց-ընտանիք կապը: Ծագած բոլոր դժվարություններն ու խնդիրները պետք է լուծվեն համատեղ ջանքերով: Ուսուցիչը պետք է տեղեկացված լինի յուրաքանչյուր աշակերտի սոցիալական և բարոյահոգեբանական վիճակի մասին: |

# Ուսումնադաստիարակչական  աշխատանքների հիմնական բովանդակությունը

| ...մնական ...պեներ | Ուսումնադաստիարակչական աշխատանքների բովանդակությունը | Կատարման ժամկետը | Կատարողներ |
|---|---|---|---|
| I. | Գիտելիքի օր: Կրթության դերն ու նշանակությունը: Դասագրքերի ապահովում : | 01.09.2023 թ | Դասվար |
| II. | Տնօրինության կողմից ծնողական ժողովի կազմակերպում : Դասարանում անցկացնել ծնողական ժողով: Ծնող –կոմիտեի վերընտրություն: | 07.09.2023 թ | Տնօրեն Դասղեկ |
| III. | Զրույց «Մաքրությունն ու համեստությունը զարդարում է մարդուն» | | |
| IV. | Զրույց «Սեպտեմբերի 21-ը Անկախության օրն է» թեմայով: Ունկնդրել մի շարք հայրենասիրական երգեր ու բանաստեղծություններ: | | |
| V. | Զրույց « Մայրս ու ուսուցչուհիս իմ կյանքում »; Սովորեցնել բանաստեղծություններ նվիրված ուսուցչին | | |
| VI. | Զրույց « Իմ սրտի մայրաքաղաք Երևան » թեմայով: Այցելել Երևանի պատմության թանգարան : | | |
| VII. | Զրույց « Համակարգիչը ընկեր , թե թշնամի» | | |
| VIII. | Զրույց « Լեզուն ազգային դրոշն է» թեմայով : սովորել ասույթներ հայոց լեզվի մասին : | | |
| IX. | Զրույց « Աշնան հրաշքները » թեմայով; Պատրաստել տարբեր իրեր գույնզգույն տերևներով և աշնան բարիքներով: | | |
| X. | Բարեկիրթ շփում, հաղորդակցում: Հետիոտների տեղաշարժը փողոցներով  և ճանապարհներով: | | |

| | | | |
|---|---|---|---|
| XI. | Կոնֆլիկտների հաղթահարում | | |
| XII. | Հանդուրժողականությունը մեր դասարանում: | | |
| XIII. | Երկրաշարժի զոհերի հիշատակի օր :Բնական աղետներ, ինչ է երկրաշարժը: | | |
| XIV. | Վնասակար սովորություններ (բանավեճ) | | |
| XV. | Զրույց «Ամանոր և նորանոր հույսեր»: Ինչպես են նշում ամանորը տարբեր երկրներում | | |
| XVI. | Գրքերն ապահով ու սառը բարեկամներ են: | | |
| XVII. | ՀՀ բանակի օր: Սովորել բանաստեղծություններ ու երգեր | | |
| XVIII. | Եկեղեցական տոներն ու ծեսերը | | |
| XIX. | Տիարն ընդ առաջ տոնի մասնակցություն | | |
| XX. | Ամենայն հայոց բանաստեղծ՝ Թումանյանի ծննդյան օր: Գիրք նվիրելու օր: | | |
| XXI. | Զրույց «Ինչպես եմ ինձ դրսևորում հասարակական վայրերում»: Ընթերցել հատվածներ «Քաղաքավարության կանոնները» գրքից : | | |
| XXII. | Լեզուն զենք է, գիտելիքը ուժ | | |
| XXIII. | « Այսօր տոնն է մայրերի» : Սովորել երգեր, բանաստեղծություններ , պատրաստել բացիկներ: | | |
| XXIV. | Գարունը նոր կյանքի սկիզբն է | | |
| XXV. | «Զատկի տոնը, տոնի խորհուրդը» | | |

| | | | |
|---|---|---|---|
| XXVI. | «1915 թ ցեղասպանությունը և նրա հետևանքները»: Հարգել անմեղ զոհերի հիշատակը: | | |
| XXVII. | Առողջ և անվտանգ սնունդ | | |
| XVIII. | | | |
| XXIX. | Երաժշտությունը իմ կյանքում | | |
| XXX. | | | |
| XXXI. | Զրույց «Հայրենասիրությունն իմ պատկերացմամբ » թեմայով | | |
| XXII. | Մայիսը հաղթանակների ամիս է | | |
| XXIII. | Մաքուր պահենք մեր բնությունը | | |
| XXIV. | Ի՞նչ տվեց ինձ այս ուսումնական տարին | | |